Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-387/-04.10.2022-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 130-րդ հոդվածի 3-րդ մասում «ու պետական սոցիալական ապահովության վճարումների չափի» բառերը փոխարինել «, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարների չափերի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Նվազագույն աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, հավելումները, հավելավճարները, պարգեւատրումները եւ լրավճարները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-387/-04.10.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ~~ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 130-րդ հոդվածի 3-րդ մասում «ու պետական սոցիալական ապահովության վճարումների չափի» բառերը

փոխարինել «, ~~նպատակային~~ սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարների չափերի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Նվազագույն աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, ~~նպատակային~~ սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, հավելումները, հավելավճարները, պարգեւատրումները եւ լրավճարները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-387-04.10.2022-ԱՍ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-387[1]-04.10.2022-ԱՍ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված և «**Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»՝ առաջարկում ենք Նախագծերի փաթեթում կիրառված «նպատակային սոցիալական» ձեւակերպումը փոխարինել «սոցիալական» ձեւակերպմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի բովանդակությունը, առ այն, որ, որպես Հայաստանի Հանրապետությունում կիրառվող	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			պետական վճար, նախատեսված է սոցիալական վճարը: Միաժամանակ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի բովանդակությունից արդեն իսկ բխում է, որ սոցիալական վճարը հանդիսանում է նպատակային վճար:		
2.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի «Հոդված 2.» բառերն առաջարկում են շարադրել թավ տառատեսակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ հոդվածի «Հոդված 4.» բառերն առաջարկում ենք շարադրել թավ տառատեսակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4.	ՀՀ կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին**» օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում նշված «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծում կատարված են երկու փոփոխություններ: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից:		

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**